

# Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

## Մայիսյան եռատոնին նվիրված ռազմականացված կրոսավազքի

### 1. Նպատակը և խնդիրները

- Դպրոցականների մեջ սեր դաստիարակել դեպի ռազմական գործը:
- Դպրոցականներին նախապատրաստել հայրենիքի պաշտպանությանը:
- Նպաստել ՆԶՊ ծրագրի յուրացմանը:
- Հանրակրթական դպրոցներում ռազմակիրառական մարզածների հետագա զարգացումն ու մասսայականացումը:
- Դպրոցականների մոտ դաստիարակել հայրենասիրություն և ապագա զինվորի համար համապատասխան որակներ՝ դպրոցականների մոտ մշակել, վազքի, նշանակետի խոցման, նռնակի նետման, անհատական պաշտպանության միջոցների ճիշտ օգտագործման, տարածության մեջ արագ կողմնորոշվելու ընդունակություններ և հմտություններ:

### 2. Մրցումների ղեկավարումը

Մրցումների ընդհանուր ղեկավարությունը իրականացնում են ԼՂՀ Կրթության և գիտության և ԼՂՀ Պաշտպանության նախարարությունները, իսկ անմիջական անցկացումը կազմակերպում է ԼՂՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

### 3. Մրցումների անցկացումը և ժամկետները

Ռազմականացված կրոսավազքը անց է կացվում 2 փուլով:  
1-ին փուլ՝ շրջանային /քաղաքային/ - մինչև 2015 թ. մայիսի 1-ը:  
2-րդ փուլ՝ հանրապետական –մայիսի 6-7-ը Ստեփանակերտ քաղաքի Ա. Դուլյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցի մոտ գտնվող մարզադաշտում:

### 4. Մասնակիցները

Մրցումներին թույլատրվում է մասնակցելու ԼՂՀ շրջանների և Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-9-րդ դասարանների տղաներին:  
Թիմի կազմը՝ 5 մասնակից և 1 ներկայացուցիչ – մարզիչ: Ընդամենը 6 հոգի:  
Հագուստը՝ մարզական /ունենալով համապատասխան տարբերանշաններ, կրծքահամարներ կամ անվանումներ:

## 5. Ծրագիրը

Մրցումները անց են կացվում հետևյալ մարզածներից և ռազմակիրառական վարժություններից, որոնց փուլերը բաշխված են 1700 մետր կրոսավազքի տարածության վրա:

1-ին փուլ – ձգումներ պտտածողի վրա / 6 մաքուր ձգում /:

2-րդ փուլ- ԿԱ ինքնաձիգի քանդում-հավաքում, պահեստատուփի լիցքավորում և լիցքաթափում /փամփուշտները գտնվում են սեղանի վրա 25 սմ.x15սմ. չափսերով ստվարաթղթե տուփի մեջ:

3-րդ փուլ – հրաձգություն օդամղիչ հրացանից / ցանկացած դիրքից՝ պառկած, ծնկած կամ կանգնած / 10 մետր հեռավորության վրա տեղադրված փուչիկներին / 3 կրակոց /:

4-րդ փուլ- 500 գրամանոց նռնակի նետում 2x 1մ չափսերի նշանակետին 15 մ հեռավորությունից:

5-րդ փուլ – լաբիրինթոսի հաղթահարում ԳՊ – 5 հակազազով:

6-րդ փուլ – 20 կգ-ց փամփուշտների արկղի տեղափոխում:

## 6. Մրցումների անցկացման կարգն ու պայմանները

Ռազմականացված կրոսավազքի մեկնարկը տրվում է յուրաքանչյուր 30 վրկ-ը մեկ: Մասնակիցը վազելով 10 մ հասնելով պտտածողին կատարում է ձգումներ /6 մաքուր ձգում/: Այնուհետև վազելով 840 մ վազքատարածք հասնում է հաջորդ փուլի տեղամասին, որտեղ կատարում է ԿԱ ինքնաձիգի քանդում, հավաքում, պահեստատուփի լիցքավորում և լիցքաթափում: Որից հետո հրաձգության տեղամասում կատարում է 3 կրակոց օդամղիչ հրացանից /հրաձգության կատարման դիրքը մասնակցի ընտրությամբ/: Ավարտելով հրաձգությունը նռնակի նետման տեղամասում կատարում է 2 նետում: Հասնելով լաբիրինթոսի հաղթահարման տեղամասը, կման կետում հազնում է հակազազը և լաբիրինթոսը անցնելուց հետո տեղավորում է այն պայուսակի մեջ: Վազքով անցնելով 830 մ վազքատարածք հասնում է մրցման վերջին տեղամասին և վերցնելով փամփուշտներով լցրած արկղը նրանով հատում է վերջնագիծը:

*Ծանոթություն:*

ա/ պտտածողի վրա 6 մաքուր ձգում չկատարելու դեպքում մասնակցին չի թույլատրվում շարունակելու մրցումները:

բ/ ավտոմատի ոչ լրիվ քանդելու և հավաքելու, ինչպես նաև պահեստատուփի լիցքավորման և լիցքաթափման հաջորդականությունը խախտելու դեպքում մասնակցին տրվում է 10 տուգանային վրկ.:

գ/ հրաձգության վարժությունում յուրաքանչյուր վրիպումի համար ընդհանուր արդյունքին գումարվում է 10 տուգանային վրկ.:

դ/ նռնակի նետման ժամանակ առաջին նետումով նշանակետը խոցելու դեպքում մասնակիցը անցնում է հաջորդ մրցատեղը /լաբիրինթոսը/:

ե/ երկու նետումից նշանակետը չխոցելու դեպքում ընդհանուր արդյունքին գումարվում է 10 տուգանային վրկ.:

## 7. Մրցումներում հաղթողների որոշման կարգը

Անհատական առաջնությունը որոշվում է մասնակցի ցույց տված լավագույն արդյունքով, որը համարվում է բոլոր արգելքների և վարժությունների հաղթահարումը ամենակարճ ժամանակում:

Հավասար ժամաքանակի դեպքում առավելությունը տրվում է այն մասնակցին, որն ունի լավագույն արդյունք հրաձգության վարժությունում, եթե այդ դեպքում էլ արդյունքները հավասար են, ապա առավելությունը տրվում է այն մասնակցին, որը նռնակի նետման վարժաձևում 1-ին փորձից խոցել է նշանակետը:

Վերջնական արդյունքը որոշվում է հաշվի առնելով մասնակիցների բոլոր փուլերում տուգանային ժամանակները:

Թիմային հաշվարկի մեջ մտնում է բոլոր մասնակիցների արդյունքների հանրագումարը: Թիմերի միջև հավասար արդյունքների դեպքում, առավելությունը տրվում է նույն կարգով, ինչպես որոշվել է անհատական առաջնության դեպքում:

## 8. Մրցումների ծախսերը

Մրցումների կազմակերպման և անցկացման հետ կապված բոլոր ծախսերը /ձանապարհածախսի, սննդի, գիշերավարձի, մրցավարների և սպասարկող անձնակազմի վճարումների, մրցանակների ձեռք բերումը/ հոգում է ԼՂՀ ԿԳ նախարարությունը: Նյութական և գործնական ծախսերի ապահովումը հրաձգության, նռնակի նետման և լաբիրինթոսի կահավորման հետ կազմակերպում է ԼՂՀ ՊՆ:

## 9. Պարգևատրությունները

Ընդհանուր թիմային հաշվարկում մրցանակային 1-3 տեղեր գրաված թիմերը պարգևատրվում են ԼՂՀ ԿԳ նախարարության ու ԼՂՀ ՊՆ համապատասխան կարգի դիպլոմներով, պատվոգրերով, դրամական պարգևներով և արժեքավոր նվերներով:

Անհատական մրցումներում 1-3 տեղեր գրաված մարզիկները պարգևատրվում են ԼՂՀ ԿԳՆ և ԼՂՀ ՊՆ պատվոգրերով և դրամական պարգևներով:

Խրախուսվում են նաև մրցանակային տեղեր գրաված թիմերի մարզիչները:

## 10. Հայտերը

Մրցումների մասնակից թիմերի անվանական հայտերը ներկայացվում են մրցումների ժամանման օրը՝ մայիսի-6-ին / հայտի ձևը կցվում է /:

Սույն կանոնակարգը պաշտոնական հրավերք է ռազմականացված կրոսավազքին մասնակցելու համար:

### Ծանոթություն:


Յուրաքանչյուր թիմ ներկայանալով մրցումներին իր հետ պետք է ունենա.

- հակազագ ԳՊ-5՝ - 5 հատ հարմարեցված մասնակիցների չափերին:
- սպորտային նռնակ / 500գր./- 2 հատ:
- մասնակիցը մրցումներին պետք է մասնակցի մարզահագուստով:

ԼՂՀ ՊՆ ռազմահայրենասիրական  
դաստիարակության և հասարակական  
կազմակերպությունների հետ կապերի  
բաժնի պետ

գնդապետ՝  Բ. Մուրադյան

ԼՂՀ ԿԳՆ ռազմահայրենասիրական,  
ֆիզիկական դաստիարակության և  
հասարակական կազմակերպությունների  
հետ կապերի բաժնի

վարիչ՝  Վ. Գրիգորյան